

## ԱՄԲԵՐԴԻ ԲԱՂՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Բագրատունյաց թագավորության կողմից 10-րդ դարում Արագածի փեշերին հիմնադրված Ամբերդ ամրոցը նշանակալից դեր կատարեց երկրի սահմանների ամրապնդման, պարսկական, Բյուզանդական Կայսրության և սելջուկների գորքերի հարձակումների չեզոքացման գործում:

Իր ժամանակական բարձր արվեստով կառուցված Ամբերդ ամրոցը շատ հաջող տեղադրված լինելով Արիսաշան և Ամբերդ գետերի ձորերով կազմված եռանկյունաձև հրվանդակի վրա, անառիկ ամրոցի համբավ է ունեցել:

Ամբերդին արվեստը հայկական բարձրավանդակի վրա ունի չափազանց խոր արմատներ, որոնք տանում են մինչև 3-րդ հազարամյակը մ.թ.ա. և նոյնիսկ ավելի վաղ: Երևանի հարավ-արևմտյան մասում, Հրազդան գետի ձախ ափին, հայտնաբերված Ծենգավիթ հնագույն բնակչության արդեն ունեցել է պաշտպանական պարիսապ<sup>1</sup> որմանեցերով, որն այժմ հայտնաբերված կառուցվածքներից հավանական է հնագույններից մեկը լինի: Նման կառուցվածքների աստիճանական զարգացման հետևանքով կիլոպյան ամրոցները փոխարինվեցին ավելի կատարելագործված ամրոցների կառուցմամբ (Ուրարտական Էրեբունի, Կարմիր բլուր, Արագած և հայկական Գառնի, Աճի, Ամբերդ): Այդ պատմական կառուցմանում ընդհանուր սկզբունքները պահպանելու հետ միասին, փոխվում է շինանյութերի օգտագործման եղանակը (կրաշաղախ, քարի մշակում), առաջ են գալիս նոր գենքի և հարնան գորամաների համագործակցության գաղափարը և մի շարք այլ հարցեր, որոնց մասին հնարավոր չեն խոսել այս հոդվածում:

Ամբերդը իրենով պարփակել է հիմնադրոված միջնադարյան ամրոցների տարածական մի շղթա—Կոչ, Արուճ, Աշճակ, Թալին<sup>2</sup> մի ուղղությամբ, Սևան Գառնի, Երևան, Դվին՝ այլ ուղղությամբ: Որքանով այդ շղթան հզոր է եղել, վկայում է այն փաստը, որ միայն Ամբերդի գրավումից հետո Զաքարե սպասալարին հաջողվեց պատել երկիրը օտար զավթիչներից և ազատել նրա մայրաքաղաք Աճին<sup>3</sup>:

Պատմական կյանքը Ամբերդում ընթացել է ընդուակ մինչև 14-րդ դարի վերջը, մինչև Լենիկթեմուրի արշավանքը, որի ավերումից հետո նա այլևս չվերականգնվեց և հասալ մեզ ավերակ վիճակում: Միջնադարյան այդ ամրոցը, մյուս ամրոցների օրինակով, ես չի մնացել որիշ քաղաքակիրթ բնակավայրերից և քաղաքներից: 1936 թվականին ակադեմիկոս Հովսեփ Օքբելո հնակալարությամբ կազմակերպված պեղումները ի հայտ բերին նշանավոր ճարտարագիտական կառուցվածքներից մեկը՝ ջրմուղը<sup>4</sup>:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում ամրոցի ջրամատակարարման սիստեմը, որ խօսված կավել խողովակներով ջուրը բերվել է 4—5 կմ հեռավորությունից: Ջուրը կուտակվել է երկու ջրամբարներում, որոնցից մեկը գտնվում է դրանի ներսում, իսկ մյուսը՝ բաղնիքից ոչ հեռու, ստորգետնյա կառուցվածքի ձևով:

Պաշարման ժամանակ թշնամու կողմից կարող էր ավերվել այդ խողովակաշարը, և ամրոցը կմնար առանց ջրի: Ուստի հին ամրոցների օրինակով, որոնց ակունքը դարձ-

<sup>1</sup> Ստ. Մհացակամյան, Երևանը և նրա շրջակագլուխությունը, Երևան, 1971, էջ 184:

<sup>2</sup> С. В. Арутюнян, Крепость Анберд и ее раскопки, автореферат, Ереван, 1969, стр. 7.

<sup>3</sup> И. А. Орбели, Баня и скоморох XII века, Избранные труды, Ереван, 1963, стр. 318,

յալ տանում է դեպի Շենգավիթ, Հառիճ, Սրբնի և այլ ամրոցներ, կառուցված է եղել սոտրգետնյա գաղտնի ճանապարհ դեպի Ամբերդ գետը: Այդ գաղտնի ճանապարհի մնացորդները այժմ հշմարվում են ձորում:

Ամրոցի բարձրադիր մասում տեղադրված է եղել Պահլավոնների դրյալը, որի մնացորդները վկայում են ժամանակին բավական շքել ներսի տարածության և կահավորվածության մասին:

Ամրոցի ավերումից հետո ամրող համակառուցը մնաց բնության ուժերի ավերիչ ազնեցության տակ: Ավերված դյանից մնացել են լոկ պատերը միայն: Անհրաժեշտ է մեծ պատկերացում ունենալ նրա երբեմնի կառուցապատված և հարդարված տեսքը զգալու համար: Միջիարկային ծածկերը եղել են իրականացված փայտից, որոնց մասին դատում ենք պատերի մեջ պահպանված խոռոչների մնացորդներով:

Ամրոցի հարավային պարսպի բորգերից մեկի միջիարկային ծածկը եղել է իրականացված ձուլած բետոնից: Այն վկայում են 1968 թվականին հնագետն Ս. Հարությունյանի կողմից դեկավարած պեղումների շնորհիվ բացված բեկորները: Բորգի միջնարևային ծածկի մակերեսը մեծ չէ, և բավական հաստ բետոնյա սալը աշխատել է որպես հավասարաչափ հենված կոնսարտիցիա:

Բացի դրյալից և Վահրամ Պահլավոնու կողմից 1029 թվականին կառուցված նշանակոր տաճարից ամրոցու կառուցված է եղել միջնադարյան բաղնիքի շենքը: Հայատանում մեծ տարածում են ունեցել բաղնիքները, որոնց գոյության մասին հարուստ տեղեկություններ է հաղորդում պատմահայր Մովսես Խորենացի<sup>5</sup>, սակայն ժամանակը չի խնայել օրանցից շատերին: Գառնիի, Անիի, Դիմիքի և այլ վայրերում պահպանված բաղնիքների շարքում Ամբերդի բաղնիքը ունի իր որոշ տեսք:

1936 թվականին ակադեմիկոս Հովհանն Օքբեկու կողմից դեկավարած պեղումները չափազանց ուշագրավ նյութ տվին ինչպես ամրոցի պատմական կյանքի, այնպես էլ բաղնիքի վերաբերյալ<sup>6</sup>: Գտնված երեք սաները հաղորդում են բաղնիքում զանազան անուշաբություններ և օճանելիքներ պատրաստելու և կիրառելու մասին: Մի շարք արժեքավոր նյութերի մեջ չափազանց հետաքրքրական են երկու բրոնզը վրաները, որոնք մետաղյա խողովակներով բերվող ջրի ծորակներին են պատկանելիս եղել:

Ինչպես գրում է հեղինակը, այդ գյուտերը լրացվեցին լողարանի հատակի տակ գտնված դամբարանի հայտնաբերումով: Դամբարանում գտնված ուկորների հետագոտությունը պարզ էր, որ դրանք պատկանելին են եղել մի հաշմանդամ անձնավորության, շատ հավանական է ծաղրածուի: Նրա դեմքին, անգործ վիրահատութան հետևանքով, տրված էր «հավերժ ծիծաղող» արտահայտություն: Նրա ուկորնե-



Նկ. 1. Միակոտր բարից կազմված տրոմպը  
որի հետ գտնվել էին նաև միևնույն ծաղրածուների մշտական ուղեկից արադադի ուկորները:

Այս բոլոր փաստերը բերելով Օքբեկու հայտնի աշխատություններ, ցանկանում ենք ցույց տալ, որ Ամբերդի բաղնիքի աշխարհիկ կառուցվածքը հանդիսացել է ամրոցի բարձրաստիճան տերերի համար նաև որպես համագույնական և զվարճանապու վայր:

Բաղնիքը ոչ մեծ, ուղղանկյուն հատակագծով կառուցվածք է, տեղադրված ամրոցի հյուսիս-արևելյան պատին կից: Կառուցվածքը բաղկացած է երկու փոքր դամբաներից (հանդերձարան ու լողարան) և կրակարանից:

Դամբաների սպասարակների սպեքը տեղադրված են եղել քարե սյուների վրա: Վերջինս հնարավորություն է տվել կրակարանում տաքացված օդին ու ծիսին շարժվել հատակի տակով, հաղորդելով օրան իր շերմությունը: Անկյուններում տեղադրված թրծված կավե խողովակներով հետաքրքրական պատկանելիս եղել էր նաև պատկանելիս այդ օդը տաքացնում էր նաև պատերը<sup>7</sup>:

<sup>7</sup> Ի. Ա. Օրբելի, տամ же.

Ի. Ա. Տուքարեցի, Արխիտեկտուրա Արմենիա IV—XIV աւ, Երևան, 1961, սր. 188,

<sup>5</sup> Մովսես Խորենացի, Պատմություն հայոց:

<sup>6</sup> Ի. Ա. Օրբելի, տամ же.

Դահլիճները ծածկված են եղել միակուր քարից կազմված (Ակ. 1), տրոմպների վրա նենալով գմբեթներով, որոնց գագաթում բացված փոքր երդիկներից թափանցող լույս լուսավորել է լողարանի և հանդերձարանի ներսի տարածությունները:

Պատերը ներսից եղել են պատված անշրանցիկ պատով: Դահլիճները միացված են եղել իրար լայն բացվածքով: Կրակարանում տարացված ջուրը մետաղյա խողովակներով բերվել էր լողարան: Սառը



Նկ. 2. Ընդհանուր տևաքը հարավ-արևմուտքից

ջուրը մի այլ խողովակով միացվում էր ընդհանուր շրամատակարարման ցանցից առանձնացված խողովակին: Օգտագործված ջրերը հավաքվում և հեռացվում են մի այլ խողովակով, որը դուրս գալով միակ մուտքի մոտ բացված անցքով ողջովում էր դեպի ձոր:

Բաղնիքի շենքը նոյնական կիսավեր վիճակում է հասել մեզ (Ակ. 2): Հարավային պատի մեջ մի քանի տեղերում առաջացել էին քաղվածություններ: Դահլիճների գմբեթները խիստ քանդվել են, տրոնվենի մի մասը տեղից խախտվել էր, ստղծելով ավերակի տպավորություն: Կրակարանը ամբողջությամբ ավերվել էր:

Այս պայմաններում կառուցվածքի երկա-

րակեցողյան հարցը շատ լուրջ էր դրված, և անհրաժեշտ էին շտապ միջոցառումներ վերանորոգման աշխատանքներն սկսելու համար:

Զաված ճանապարհին ծանր պայմաններին այնուամենազնիվ աշխատանքներով հնարավոր դարձավ կազմակերպել Հատուկ գիտա-վերանորոգման արվեստանոցի բանքերով, Պատմական հոչարձանների պահպանման ընկերության միջոցներով:

Բաղնիքի վերանորոգման նախագիծը կազմված է պրոֆեսոր Վ. Հարությունյանի և ճարտարապետ Ս. Գյուրջյանի չափագրության հիման վրա:

Վերը նշված պեղումների ժամանակ, դեռ 1936 թվականին, բաղնիքի շենքը ենթարկվել էր մասնակի վերանորոգման, սակայն նրա ընդհանուր կայունությունը դեռ ապահովված չէր:

Նախագիծը նախատեսում է խարխուղ պատերի վերանորոգումը, կատարելով երեսապատերի վերաշար, նոր քարերի լրացումով: Մուտքի բարավորը, համաձայն պահպանված հիմքերի, իրականացված է միակուր քարից: Ներսում վերականգնվում են գմբեթների խարխուղ մասերը և լրացվում նոր կրկնակի կորություն ունեցող քարերով: Երդիկների վերանորոգումը պահանջեց տեղադրել հրանց եզրող ձևավոր քարերը: Վերջինիս արտաքինից տրըվեց ցածր թմրուկ հիշեցնող տեսք: Տանիքը նախատեսվում է ծածկել միջնադարին հատուկ բազալտե սալերով:

Վերշերս բաղնիքի շրջակալրում պատահար գտնվեց քիվի մի բեկորը, որը սակայն իր տաշվածքի ձևով և տրամատով այնքան էլ չի համապատասխանում շենքի ընդհանուր ոճին: Նախագծում քիվ չի նախատեսվում և այդ հարցը, լիարժեք կը ուղանենք չունենալու հետևանքով, առայժմ մնում է բաց:

Նախատեսվում է վերականգնել դահլիճների հատակի սալերը բազալրից, պահպանելով հատակի կառուցման պատմական ձևը:

Վերանորոգումը նախատեսվում է իրականացնել նոյն բազալտ քարից, որով կառուցված է բաղնիքը, կիրառելով խառը շաղախ: